ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և հաղորդակցության նախարարության և Ուզբեկստանի Հանրապետության ավտոտրանսպորտի նախարարության միջև ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում փոխհարաբերությունների մասին

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և հաղորդակցության նախարարությունը և Ուզբեկստանի Հանրապետության ավտոտրանսպորտի նախարարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

ղեկավարվելով միջազգային պրակտիկայով և երկու երկրների միջև ավտոմոբիլային հաղորդակցության հետագա զարգացման ձգտումով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագիրը սահմանում է երկու պետությունների միջև և դրանց տարածքներով տարանցմամբ ուղևորների և բեռների փոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցների (ավտոբուսների, կցորդներով և կիսակցորդներով կամ առանց դրանց բեռնատար ավտոմեքենաներ) երթևեկության, ինչպես նաև ավտոմոբիլային տրանսպորտի զարգացման և գործողության հետ կապված գործունեության փոխադարձաբար համակարգման պայմանները:

Հոդված 2

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կապահովի պայմաններ իր պետության տարածքով մյուս Պայմանավորվող կողմի ավտոտրանսպորտային միջոցների անարգել երթևեկության համար, այդ թվում՝ դեպի երրորդ երկրներ տարանցմամբ:

Հոդված 3

Սույն Համաձայնագրի հիման վրա փոխադրումներ կատարելիս Պայմանավորվող կողմերից մեկի փոխադրողները, գտնվելով, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության տարածքներում, պարտավոր են պահպանել այնտեղ գործող երթևեկության կանոնները, ավտոմոբիլային տրանսպորտին վերաբերող օրենքները և այլ նորմատիվները:

Հոդված 4

1. Պայմանավորվող կողմերը համաձայնեցին պահպանել ստորագրման պահին գործող՝ ավտոմոբիլային տրանսպորտի աշխատանքը կանոնակարգող կանոնները, հրահանգները, դրույթները, ցուցումները, ստանդարտները և տեխնիկական պայմանները:

2. Փոփոխությունները, ինչպես նաև մյուս Պայմանավորվող կողմի շահերը շոշափող նոր նորմատիվ փաստաթղթերի հաստատումը նրանց միջև կատարվում է փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերը իրենց պետությունների տարածքում կապահովեն հավասար պայմաններ տրանսպորտային և տրանսպորտային-էքսպեդիցիոն ձեռնարկությունների համար, անկախ դրաց սեփականության ձևից և սույն Համաձայնագրի Պայմանավորվող կողմերին պատկանելությունից, տրանսպորտային և տրանսպորտային-էքսպեդիցիոն ծառայությունների վաճառքի ոլորտում, ինչպես նաև կաջակցեն համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը, այդ թվում՝ բաժնետիրական հիմունքներով:

Հոդված 6

Պայմանավորվող կողմերը փոխադարձության հիմունքներով կհամակարգեն աշխատանքը հետևյալ ոլորտներում.

- ավտոմոբիլային տրանպորտում գիտատեխնիկական քաղաքականություն,
- ավտոմոբիլային տրանսպորտի աշխատանքը կանոնակարգող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի, ստանդարտների և նորմերի նախագծերի մշակում,
- շարժակազմին տեխնիկական օգնություն ցուցաբերելու, ավտոմեքենաները վառելիքաքսայուղային նյութերով լիցքավորելու համար պայմանների ստեղծում,
- վթարների դեպքում օգնության ցուցաբերում:

Հոդված 7

Պայմանավորվող կողմերի իրավասու իշխանությունները վթարների կամ դժբախտ պատահարների դեպքում մյուս Պայմանավորվող կողմի տրանսպորտային միջոցների կամ անձնակազմի անդամների հետ ցուցաբերում են անհրաժեշտ օգնություն, իսկ ծանր վթարների կամ դժբախտ պատահարների դեպքում՝ այդ մասին ծանուցում են մյուս Պայմանավորվող կողմին, որում գրանցված է տրանսպորտային միջոցը և տեղեկացնում են նրան քննության արդյունքների մասին:

Հոդված 8

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր տարածքում ճանաչում է Հայաստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից տրված ավտոտրանսպորտային միջոցի վարման գրանցման փաստաթղթերը և համարանիշները:

Հոդված 9

Պայմանավորվող կողմերը կպահպանեն տնտեսական կապերը և փոխհարաբերությունները տրանսպորտային միջոցների և դրանց պահեստամասերի պատրաստման, մատակարարման և նորոգման գծով:

Հոդված 10

Պայմանավորվող կողմերը սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման հետ կապված բոլոր վիճելի հարցերը կլուծեն բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կգործի մինչև 90 օրը լրանալը այն օրվանից, երբ Պայմանավորվող կողմերից մեկը մյուս Կողմին գրավոր կծանուցի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Երևան քաղաքում 1992 թվականի օգոստոսի 20-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ուզբեկերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր երեք տեքստերը հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1992 թվականի օգոստոսի 20-ից: